



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՆԱՆՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 01 » 06 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0099-21

Ձեռնարկողը՝

«ԱԳՐՈՀԱՆԴ» ՍՊԸ

ք. Հրազդան Շահումյան փ. ք. 161

Գործունեությունը՝ Լանջաղբյուրի բազալի հանքավայրի բացահանքի
արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահատման հաշվեկտրություն
Կտրայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0099-21
<Չ1> 06 2021թ.

Կոտայքի մարզի Լանջաղբյուրի բազալտի հանքավայրի բացահանքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

«ԱԳՐՈՂԱՆԴ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
նախագծային փաստաթղթեր

Տեղադրման վայրը՝

Կոտայքի մարզ, Հրազդան համայնք

Ներածական մաս. «ԱԳՐՈՂԱՆԴ» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝
Ընկերություն/ նախատեսվում է ՀՀ Կոտայքի մարզի Լանջաղբյուրի բազալտի
հանքավայրում իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և
փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ.
ենթակետի՝ Լանջաղբյուրի բազալտի հանքավայրի արդյունահանումը՝ որպես
նախատեսվող գործունեություն դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Նկարագրական մաս. Լանջաղբյուրի բազալտի հանքավայրը գտնվում է Հրազդան
քաղաքից 9.5կմ հեռավորության վրա՝ հյուսիս-արևելք ուղղությամբ: Հանքավայրին
ամենամոտ գտնվող Լեռնանիստ բնակավայրը հայցվող տեղամասից գտնվում է մոտ
6.5կմ հեռավորության վրա: Ընկերության կողմից նախագծված բացահանքը զբաղեցնում է
5.98 հա տարածք, որի եզրավորող կոորդինատները WGS -84 համակարգով հետևյալն
են.

- | | |
|------------------|----------------|
| 1. Y = 8488798.0 | X = 4478754.0 |
| 2. Y = 8488843.0 | X = 4478732.0 |
| 3. Y = 8488859.0 | X = 4478709.0 |
| 4. Y = 8488855.0 | X = 4478509.0 |
| 5. Y = 8488646.0 | X = 4478453.0 |
| 6. Y = 8488648.0 | X = 4478799.0: |

Հողամասի 2.53 հեկտարը գտնվում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և
այլ արտադրական նպատակային նշանակության, ընդերքի համար նախատեսված
հողամասի սահմաններում իսկ մնացածը՝ գյուղատնտեսական նպատակային
օգտագործման հողեր են:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են հրաբխային
խարամները, բազալտները և այլովիալ-դեյուլիալ առաջացումները: Օգտակար հանածոն
հանդիսանում է բազալտը, որը հանքավայրի տարածքում ունի համարյա հորիզոնական
տեղադրում՝ կապված է ռելիեֆի ցածրադիր մասերին: Հանքավայրում մակաբացման
ապարների հզորությունը տատանվում է 0.4մ-ից 2.0մ-ի սահմաններում, միջինը կազմելով՝
1.2մ, իսկ հողմնահարված բազալտի հզորությունը՝ 0.2մ: Օգտակար հանածոյի
հզորությունը տատանվում է 7.1մ-ից 17.0մ-ի սահմաններում, կազմելով միջինը՝ 11.5մ:
Մակաբացման միջին գործակիցը 0.262մ³/մ³ է:



Լանջադրյուրի բազալտի հանքավայրի և դրա հարակից տարածքներում բացակայում են սողանքային մարմինները: Տարածքը զուրկ է ծառաթփային բուսականությունից ստորերկրյա և գրունտային ջրերից: Հարևանությամբ բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, վտանգված էկոհամակարգերը, կամ պատմամշակութային հուշարձանները:

ՀՀ Կոտայքի մարզի Լանջադրյուրի բազալտի հանքավայրի պաշարները հաստատվել են նախկին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին կից երկրաբանական վարչության պաշարների տեղական հանձնաժողովի կողմից 21.04.1969թ-ին թիվ 184 արձանագրությամբ, հետևյալ քանակներով և կարգերով՝ A - 219.0հազ.մ³, B - 397.0 հազ.մ³, C1 - 1726.0 հազ.մ³, ընդամենը՝ 2342.0 հազ.մ³: Շինարարական քարերի արտադրության բյուջեի ելքը կազմում է 39%:

Հանքավայրի մնացորդների պաշարը 01.01.2020թ-ի դրությամբ կազմում են՝ A կարգով՝ 103.0հազ.մ³, B+C₁ կարգերով՝ 2034.152 հազ.մ³, ընդամենը՝ 2137.152 հազ.մ³: Ընկերության կողմից նախագծված բացահանքի օտարման տարածքը կազմում է 5.98 հա, նրա վերջնական եզրագծի մեջ ներառված օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները կազմում են 213000.0մ³, իսկ արդյունահանվող օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները՝ 202350.0մ³: Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ բազալտի մարվող զանգվածի կազմում է 4260.0մ³, ըստ բազալտի արդյունահանվող զանգվածի՝ 4050.0մ³: Բազալտները կարող են օգտագործվել որպես խիճ բետոնի արտադրության ժամանակ:

Գործունեության համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ, կապված հանքաքարի վերամշակման հետ, ընտրվել է հանքավայրի տարածքում ջարդիչ կայանքի նախատեսումը, ինչը նպատակահարմար է ինչպես բնապահպանական և ֆինանսատնտեսական տեսանկյունից:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Շահագործման աշխատանքներն իրականացնելու համար նախատեսվում է՝ մոտեցող ավտոճանապարհի կարգաբերում, ընդլայնում և կառուցում /160մ³ ծավալով/, լցակույտային հրապարակի նախապատրաստում /50.0մ³ ծավալով/, արտադրական հրապարակի պատրաստում /75.0մ³ ծավալով/: Բացահանքի բացումը կատարվելու է դեպի 2275մ նիշ ունեցող հորիզոնից՝ ներքին թեք խրամի անցումով /խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 6.0 մ/: Կիսախրամների անցումը կատարվում է բուլդոզեր-էքսկավատոր- ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

Ընկերության կողմից նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- Ամենամեծ երկարությունը – 346.0մ,
- Ամենամեծ լայնությունը – 230.0մ,
- Մշակման առավելագույն խորությունը – 10.0մ,
- Կողերի թեքման անկյունը – 75⁰,
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 213000.0 հազ.մ³,
- Արդյունահանվող պաշարների քանակը – 202350 հազ.մ³,
- Մակաբացման ապարների քանակը – 53100.0մ³:

Բացահանքում բազալտների արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել միակողանի ընդլայնական ընթացքաշերտերով համատարած մշակման համակարգով՝ մակաբացման ապարները ներքին լցակույտեր տեղափոխելով: Օգտակար հանածոն մշակվում է ողջ հզորությամբ, 1 հանքաստիճանով՝ համատարած կերպով:

